✣ Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս· ամէն։

✣ Blessed is our Lord Jesus Christ. Amen.

Հայր մեր, Որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո, եկեսցէ արքայութիւն Քո, եղիցին կամք Քո որպէս յերկինս եւ յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։ Թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց· եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա ի չարէ։ Զի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս· ամէն։

Our Father Who art in heaven; hallowed be Thy name. Thy kingdom come. Thy will be done on earth as it is in heaven. Give us this day our daily bread. And forgive us our trespasses, as we forgive those who trespass against us. And lead us not into temptation, but deliver us from evil, in Christ Jesus our Lord. For Thine is the kingdom, the power and the glory, forever. Amen.

✣ Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ։ Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ, եւ ի մեղաց իմոց սուրբ արա զիս։ Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, եւ մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

✣ Have mercy upon me, O God, according to Your great mercy; and according to the multitude of Your compassions blot out my iniquity. Wash me thoroughly from my iniquity, and cleanse me from my sin. For I am conscious of my iniquity; and my sin is at all times before me.

Քեզ միայն մեղայ Տէր եւ չար առաջի քո արարի։ Որպէս արդար եղիցիս ի բանս քո, եւ յաղթող ի դատել քեզ։ Անօրէնութեամբ յղացաւ, եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Against You only I have sinned, and done evil before You: that You might be just in Your sayings, and might overcome when You are judged. For, behold, I was conceived in iniquities, and in sins my mother conceived me.

Դու Տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս եւ զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։ Ցօղեա յիս մշակաւ եւ սուրբ եղէց, լուա եւ քան զձիւն սպիտակ եղէց։ Լսելի արա ինձ զցնծութիւն եւ զուրախութիւն, եւ ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

For, behold, You have loved the truth: You have manifested to me the hidden and unrevealed things of Your wisdom. You shall sprinkle me with Your hyssop, and I shall be purified: You shall wash me, and I shall be made whiter than snow. You shall make me to hear gladness and joy: the humbled bones shall rejoice.

Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց, եւ զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն։ Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած, եւ հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում։ Մի ընկենուր զիս Տէր յերեսաց քոց, եւ զՀոգի քո սուրբ մի հաներ յինէն։ Տուր ինձ ցնծութիւն փրկութեան քոյ, եւ հոգւով պետութեան քոյ հաստատեա զիս։ Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, եւ ամբարիշտք առ քեզ դարձցին։

Turn away Your face from my sins, and blot out all my iniquities. Create in me a clean heart, O God; and renew a right spirit in my inward parts. Do not cast me away from Your face; and do not remove Your Holy Spirit from me. Give me the joy of Your salvation: and uphold me with a directing spirit. Then I shall teach the transgressors Your ways; and the ungodly men shall turn to You.

Փրկեա զիս յարենէ Աստուած Աստուած փրկութեան իմոյ, ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում։ Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։ Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք, բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար։ Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ։

Deliver me from blood, O God, the God of my salvation: and my tongue shall rejoice in Your righteousness. O Lord, You shall open my lips; and my mouth shall declare Your praise. For if You desired sacrifice, I would have given it: You do not take pleasure in burnt offerings. The sacrifice of God is a broken spirit: a broken and humbled heart God shall not despise.

Բարի արա Տէր կամօք քովք Սիոնի, եւ շինեսցին պարիսպքն Երուսաղէմի։ Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան, յորժամ ուխտից պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս։ Ալէլուիա։

Do good, O Lord, in Your good pleasure to Zion; and let the walls of Jerusalem be built. Then You shall be pleased with sacrifices of righteousness, offering, and burnt sacrifices: then they shall offer calves upon Your altar. ALLELUIA.

✣ Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ·
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից· ամէն։

✣ Glory to the Father and the Son and the Holy Spirit.
Now and forever and into the ages of ages. Amen.